ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-7/66-1

ք. Երևան 17-ը օգոստոսի 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Ազատյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված հանդերձանք /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից** ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից** ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 116 704 800 (մեկ հարյուր տասնվեց միլիոն յոթ հարյուր չորս հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ այն երկկողմ հաստատելու պահից՝ 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ.:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5	"Քանաքեռի կարի ֆաբրիկա" ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Ք. Երևան, Զ. Սարկավագի 157
աշխատակազմի գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1510023294810100
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 00803554
ՀՀ պաշտպանության նախարարության	
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	տնօրեն
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ա. ՌԱՍՅԱՆ

Հավելված N 1 N ԳՀԱՊՁԲ-7/66-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. **Լեռնային, գունաքողարկված համազգեստ (լրակազմ)** Համազգեստը բաղկացած է բաճկոնից, տաբատից, պանամայից, կեպիից և 90սմx190սմ չափսերով մոծակապաշտպան պոլիէսթերից ցանցից: Կտորի գործվածքը <<Ռիպստոպ>> տեսակի, մակերեսային խտությունը 185 գրամ, բաղադրությունը 65% պոլիէսթեր, 35% բամբակ, հակաինֆրակարմիր ճառագայթային նյութի ներծծմամբ, երանգը լեռնանտառային 4 գույնանի թվային պատկերով, որից՝ մուգ կանաչ 40%, շագանակագույն-30%, սև-15% և բաց շագանակագույն /բեժ/-15%:

Բաճկոնը միալանջ, գաղտնի կենտրոնական կոճկվածքով է, կոճկվում է 4 օղակ կոճակներով, 5-րդ կոճակը կոճկվում է բաց կոճկվածքով: Բաճկոնն ունի 5սմ լայնությամբ ծալովի ուղղանկյունաձև կանգունակով օձիք: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Առաջամասում մշակված են կափույրներով վրադիր երկու գրպաններ, որոնք տեղակայված են կրծքամասում, 75 աստիճան դեպի ներս թեքությամբ՝ կենտրոնական ուղղահայաց կարից 1,5 սմ հեռավորության վրա: Գրպանի լայնությունը 14,5 սմ, երկարությունը 17,5 սմ: Ձախ գրպանի կափույրի մեջտեղում, ներսամասից նախատեսված է գրիչների համար գրպանիկ, 4,5 սմ լայնությամբ կտրվածքով: Առաջամասի գրպանները կոճկվում են կպչուն ժապավենով: Թևքերի վրա մշակված են կափույրով ծավալուն վրադիր գրպաններ, որոնք կոճկվում են, գաղտնի կոճկվածքով կոճկվում են կպչուն ժապավենով՝ լայնությունը 13 սմ, երկարությունը 16 սմ: Գրպանների թեքությունը դեպի ներս, ուսակարերի նկատմամբ՝ 120 աստիճան: Վրադիր գրպանների կափույրները զարդակարված են 0.5սմ լայնությամբ կարով:

Թևքերը ներկարված են ամբողջովին փակ զույգ կարերով: Արմունկի մասում մշակվում են լրացուցիչ կրկնակի զարդակարերով ուղղանկյունաձև արմնկակալներ: Թևքերի դարձերեսին արմնկակալների մասում մշակվում է պաշտպանիչ թևկալների համար գաղտնի կտրվածքով 12 սմ երկարության բացվածքով և 3 սմ լայնության մանժետով գրպաններ: Կողքերի, թևքերի և ուսերի միացման կարերը կարվում են փակ զույգ կարերով:

Թևքերի ներքևի մասում մշակված են անկյունաձև պատաներ, որոնք բազկակալում կոճկվում են կպչուն ժապավենով:

Տաբատը ուղիղ կարվածքով, մշակված գոտիով, գուլֆիկը գաղտնի կոճկվածքով, 3 օղակ կոճակով: Առաջամասում կողքից, թեք ներկարված գրպաններ, 17սմ բացվացքով: Գոտին մշակված է 7 գոտեմակօղակով և գոտու չափը կարգավորող ձգված էլաստիկ ժապավենով: Կողքերից մշակված են կափույրով ծավալուն եռածալ վրադիր գրպաններ: Կափույրների առաջամասը ֆիքսված է ամրակարով, կոճկվում են կպչուն ժապավենով: Գրպանի լայնությունը 20 սմ, երկարությունը 25սմ, եռածալ, ծալքերի լայնությունը 5 սմ: Գրպանի վերնամասը (բերանը) մշակված է 4սմ լայնությամբ ձգված էլաստիկ ժապավենով:

Տաբատի առաջամասում մշակված են, գրպանի ներքևի եզրից, (եզրը՝ ներսից դուրս, 6 սմ շեղությամբ) քառանկյուն ծնկակալներ, եզրերը կարված զույգ կարերով: Տաբատի դարձերեսին ծնկների մասում մշակվում է պաշտպանիչ ծնկկալների համար գաղտնի կտրվածքով 16 սմ երկարության բացվածքով և 3 սմ լայնության մանժետով գրպաններ: Նստատեղը մշակված է օվալաձև կրկնակի կտորից՝ զարդակարված 0.7սմ լայնությամբ կրկնակի կարով: Տաբատի փողքերի ներսամասում կարվում է կարգավորվող երկու կոճակ օղակներով փողքաժապավեն: Ներսի, դրսի և հետնամասի միացման կարերը կարվում են փակ զույգ կարերով:

Բաճկոնի և տաբատի միացման բոլոր կարերը կարվում են շղթայական փակ զույգ կարերով:

Համազգեստի կոճակները՝ 18մմ տրամագծով պատրաստված ջերմադիմացկուն (չհալվող) նյութից, չորս կարանցքերով, եզրերը թեք անկյան տակ հղկված, երկկողմանի կարվող, գույնը՝ խակ կանաչ:

Պանաման կազմված է թասակից և եզրային կողերից, եզրային կողերը, զարդակարված 5 մմ լայնության կարերով: Թասակի աջ և ձախ կողմերի վերին մասը ունի 3-ական մետաղական օդափոխիչ անցքեր մինչև 4մմ տրամագծով, իսկ ներքևի մասում ամրացվում է էլաստիկ քուղ չափսի փոփոխության կարգավորիչով:

Կեպին աստառով է, կազմված է կոշտ հովհարից, միջնամասից, կողմամասերից և հատակից: Հետնամասում, կեպիի չափը փոփոխելու համար մշակված է պաշտպանական գույնի պլաստմասե կարգավորիչ: Հովհարը միանում է գլխարկին կտորի կողեզրերով: Հովհարին միջադրված է պլաստմասե միջադիր: Կեպիների հովհարը արտադրվում է կլորավուն և մեջտեղի մասում 6 սմ լայնությամբ: Ատտառի կողմից ճակատային մասին տեղադրված է 5.7X 4.5 սմ չափի արհեստական կաշվե կտոր:

Բաճկոնի և տաբատի ներսամասում փակցվում է համազգեստի խնամքի վերաբերյալ պիտակ (լվացքի ջերմաստիճանի, արդուկման և քիմմաքրման): Բաճկոնի ներսի կողմի ձախակողմյան փեշին, ներքևից երեք սմ բարձրության վրա պետք է լինի տպագրական ներկով դրոշմ: Դրոշմի վրա նշված տեսականու չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Ներսի կողմից փակցվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ:

Փաթեթավորումը՝ հակերով, մեկ հակի մեջ 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1լրակազմ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումները: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը՝ 2%:

Չափս-հասակային սանդղակ.

Կրծքավանդակի շրջագիծը / Հասակը	48	50	52	54	56	58	60	62	64	Ընդամենը %

2	2	3	2	2						9
3	3	8	13	13	10	3	3			53
4	3	6	8	8	4	1	0,4	0,3	0,1	30,8
5		0,5	1,5	1,5	0,5	0,5	0,5	0,1	0,1	5,2
6		0.1	0,4	0,4	0,4	0,3	0,2	0,1	0,1	2
Ընդամենը %	8	17,6	24,9	24,9	14,9	4,8	4,1	0,5	0,3	100

Արտադրողի անվանումը՝ "Քանաքեռի կարի ֆաբրիկա" ՍՊԸ:
Ծագման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

2. **<u>Տափաստանային գունաքողարկված համազգեստ (լրակազմ)</u>** Համազգեստը բաղկացած է բաճկոնից, տաբատից, պանամայից, կեպիից և 90սմx190սմ չափսերով մոծակապաշտպան պոլիէսթերից ցանցից: Կտորի գործվածքը 'Ռիպստոպ' տեսակի, մակերեսային խտությունը 185 գրամ, բաղադրությունը 65% պոլիէսթեր, 35% բամբակ, հակաինֆրակարմիր ճառագայթային նյութի ներծծմամբ,, երանգը տափաստանային 4 գույնանի, որից՝ շագանակագույն-40%, կանաչ 30%, սև-15% և բաց շագանակագույն /բեժ/-15%:

Բաճկոնը միալանջ, գաղտնի կենտրոնական կոճկվածքով է, կոճկվում է 4 օղակ կոճակներով, 5-րդ կոճակը կոճկվում է բաց կոճկվածքով: Բաճկոնն ունի 5սմ լայնությամբ ծալովի ուղղանկյունաձև կանգունակով օձիք: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Առաջամասում մշակված են կափույրներով վրադիր երկու գրպաններ, որոնք տեղակայված են կրծքամասում, 75 աստիճան դեպի ներս թեքությամբ՝ կենտրոնական ուղղահայաց կարից 1,5 սմ հեռավորության վրա: Գրպանի լայնությունը 14,5 սմ, երկարությունը 17,5 սմ: Ձախ գրպանի կափույրի մեջտեղում, ներսամասից նախատեսված է գրիչների համար գրպանիկ, 4,5 սմ լայնությամբ կտրվածքով: Առաջամասի գրպանները կոճկվում են կպչուն ժապավենով: Թևքերի վրա մշակված են կափույրով ծավալուն վրադիր գրպաններ, որոնք կոճկվում են, գաղտնի կոճկվածքով կոճկվում են կպչուն ժապավենով՝ լայնությունը 13 սմ, երկարությունը 16 սմ: Գրպանների թեքությունը դեպի ներս, ուսակարերի նկատմամբ՝ 120 աստիճան: Վրադիր գրպանների կափույրները զարդակարված են 0.5սմ լայնությամբ կարով: Թևքերը ներկարված են ամբողջովին փակ զույգ կարերով: Արմունկի մասում մշակվում են լրացուցիչ կրկնակի զարդակարերով ուղղանկյունաձև արմնկակալներ: Թևքերի դարձերեսին արմնկակալների մասում մշակվում է պաշտպանիչ թևկալների համար գաղտնի կտրվածքով 12 սմ երկարության բացվածքով և 3 սմ լայնության մանժետով գրպաններ: Կողքերի, թևքերի և ուսերի միացման կարերը կարվում են փակ զույգ կարերով:

Թևքերի ներքևի մասում մշակված են անկյունաձև պատաներ, որոնք բազկակալում կոճկվում են կպչուն ժապավենով:

Տաբատը ուղիղ կարվածքով, մշակված գոտիով, գուլֆիկը գաղտնի կոճկվածքով, 3 օղակ կոճակով: Առաջամասում կողքից, թեք ներկարված գրպաններ, 17սմ բացվացքով: Գոտին մշակված է 7 գոտեմակօղակով և գոտու չափը կարգավորող ձգված էլաստիկ ժապավենով: Կողքերից մշակված են կափույրով ծավալուն եռածալ վրադիր գրպաններ: Կափույրների առաջամասը ֆիքսված է ամրակարով, կոճկվում են կպչուն ժապավենով: Գրպանի լայնությունը 20 սմ, երկարությունը 25սմ, եռածալ, ծալքերի լայնությունը 5 սմ: Գրպանի վերնամասը (բերանը) մշակված է 4սմ լայնությամբ ձգված էլաստիկ ժապավենով: Տաբատի առաջամասում մշակված են, գրպանի ներքևի եզրից, (եզրը՝ ներսից դուրս, 6 սմ շեղությամբ) քառանկյուն ծնկակալներ, եզրերը կարված զույգ կարերով: Տաբատի դարձերեսին ծնկների մասում մշակվում է պաշտպանիչ ծնկկալների համար գաղտնի կտրվածքով 16 սմ երկարության բացվածքով և 3 սմ լայնության մանժետով գրպաններ: Նստատեղը մշակված է օվալաձև կրկնակի կտորից՝ զարդակարված 0.7սմ լայնությամբ կրկնակի կարով: Տաբատի փողքերի ներսամասում կարվում է կարգավորվող երկու կոճակ օղակներով փողքաժապավեն: Ներսի, դրսի և հետնամասի միացման կարերը կարվում են փակ զույգ կարերով:

Բաճկոնի և տաբատի միացման բոլոր կարերը կարվում են շղթայական փակ զույգ կարերով: Համազգեստի կոճակները՝ 18մմ տրամաչափի, պատրաստված ջերմադիմացկուն (չհալվող) նյութից, չորս կարանցքերով, եզրերը թեք անկյան տակ հղկված, երկողմանի կարվող, գույնը՝ խակ կանաչ:

Պանաման կազմված է թասակից և եզրային կողերից, եզրային կողերը, զարդակարված 5 մմ լայնության կարերով: Թասակի աջ և ձախ կողմերի վերին մասը ունի 3-ական մետաղական օդափոխիչ անցքեր մինչև 4մմ տրամագծով, իսկ ներքևի մասում ամրացվում է էլաստիկ քուղ չափսի փոփոխության կարգավորիչով:

Կեպին աստառով է, կազմված է կոշտ հովհարից, միջնամասից, կողամասերից և հատակից: Հետնամասում, կեպիի չափը փոփոխելու համար մշակված է պաշտպանական գույնի պլաստմասե կարգավորիչ: Հովհարը միանում է գլխարկին կտորի կողեզրերով: Հովհարին միջադրված է պլաստմասե միջադիր: Կեպիների հովհարը արտադրվում է կլորավուն և մեջտեղի մասում 6 սմ լայնությամբ: Աստառի կողմից ճակատային մասին տեղադրված է 5.7X 4.5 սմ չափի արհեստական կաշվե կտոր:

Բաճկոնի և տաբատի ներսամասում փակցվում է համազգեստի խնամքի վերաբերյալ պիտակ (լվացքի ջերմաստիճանի, արդուկման և քիմմաքրման): Բաճկոնի ներսի կողմի ձախակողմյան փեշին, ներքևից երեք սմ բարձրության վրա պետք է լինի տպագրական ներկով դրոշմ: Դրոշմի վրա նշված տեսականու չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Ներսի կողմից փակցվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ:

Փաթեթավորումը՝ հակերով, մեկ հակի մեջ 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1լրակազմ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու

անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումները: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը՝ 2%:

Չափս-հասակային սանդղակ.

Կրծքավանդակի շրջագիծը / Հասակը	48	50	52	54	56	58	60	62	64	Ընդամենը %
2	2	3	2	2						9
3	3	8	13	13	10	3	3			53
4	3	6	8	8	4	1	0,4	0,3	0,1	30,8
5		0,5	1,5	1,5	0,5	0,5	0,5	0,1	0,1	5,2
6		0.1	0,4	0,4	0,4	0,3	0,2	0,1	0,1	2
Ընդամենը %	8	17,6	24,9	24,9	14,9	4,8	4,1	0,5	0,3	100

Արտադրողի անվանումը՝ "Քանաքեռի կարի ֆաբրիկա" ՍՊԸ:

Ծագման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

3. **Կոստյում՝ բամուց և անձրևից պաշտպանող (լրակազմ)** Կոստյումը բաղկացած է բաճկոնից և տաբատից: Կոստյումը արտադրվում է անջրաթափանց պոլիվինիլքլորե պատվածքով արհեստական 250 գրամ մակերեսային խտության գործվածքից՝ ՀՀ ԶՈՒ գործող դաշտային համազգեստի երանգով, գործվացքի բաղադրությունը 65% պոլիէսթեր, 35% բամբակ:

Բաճկոնի թիկունքամասը մշակված է վրակարված կոկետկայով: Զարդակարը ներսամասից ամրակարված է լրացուցիչ անջրաթափանց ժապավենով: Առաջամասերում, գոտկատեղից ներքև և բաճկոնի ներքին եզրից 12սմ բարձրության վրա, կողակարերին զուգահեռ և անմիջապես կպած, մշակված են ներկարված կողային կայծակ շղթայով փակվող 17 սմ երկարությամբ գրպաններ: Բաճկոնը ունի ներկարված թևքեր: Բաճկոնը ամբողջ երկայնքով՝ ներառյալ օձիքը, կոճկվում է կայծակ շղթայով: Բաճկոնի թևքերի ներքևի եզրերը մշակված են էլաստիկ ժապավեններով, իսկ բաճկոնի ներքնամասը ձախ և աջ կողերից կարգավորիչ քուղով:

Բաճկոնի օձիքը երկշերտ, հետնամասում ունի գլխանոցի համար նախատեսված գրպան, որի ներսում կարված է կպչուն ժապավենի մի մասը, մյուս մասը ամրակարված է գլխանոցի վրա, որպեսզի գլխանոցը ծալված հավաքված վիճակում ֆիքսվի այդ գրպանում: Օձիքի վերին եզրի ծալվածքի մեջով անցկացված է կարգավորող քուղ: Բաճկոնին ամրակարված է անջրաթափանց արհեստական գործվածքից գլխանոց: Գլխանոցը կարգավորվում է ծալվածքի մեջով անցկացված քուղով:

Տաբատը մշակված է ներկարված կարգավորիչ ճարմանդով գոտիով: Գոտկատեղի հետնամասում մշակված է 10-15սմ երկարությամբ ներկարված էլաստիկ ժապավեն: Տաբատը կողքերից ամբողջ երկայնքով մշակված է մեկական երկկողմանի աշխատող կայծակ շղթայով, որը գոտկատեղի մասում լրացուցիչ ամրանում է կպչուն ժապավենով: Շղթաները տաբատի ներքևի եզրերից 30-35սմ դեպի վերև ծածկվում են ցեխապաշտպան կափույրներով, որոնք մեկ եզրից կարված են տաբատից, իսկ մյուս եզրերի ամրացման համար ներքևի մասերում մշակված են մեկական կոճգամներ: Տաբատը համալրված է 2 հատ էլաստիկ ուսափոկերով, որոնց ամրացման համար գոտու վրա մշակված է 4 հատ ամրակ: Ուսափոկերի վրա առկա են մեկական երկարության կարգավորիչներ: Տաբատը կոճկվում է գաղտնի կայծակ շղթայով և վերնամասում մեկ հատ կոճգամով: Բոլոր միացման կարերը մշակվում են սոսնձվող թերմոռետինե ժապավենով:

Բաճկոնի և տաբատի ներսից կարվում են արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակները: Կոստյումի արտաքին տեսքը ընդհանուր նկարագրին համարժեք:

Փաթեթավորումը՝ հակերով, մեկ հակի մեջ 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1լրակազմ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումները: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը՝ 2%:

Չափս-հասակային սանդղակ.

Կրծքավանդակի շրջագիծը / Հասակը	48	50	52	54	56	58	60	62	64	Ընդամենը %
2	2	3	2	2						9
3	3	8	13	13	10	3	3			53
4	3	6	8	8	4	1	0,4	0,3	0,1	30,8
5		0,5	1,5	1,5	0,5	0,5	0,5	0,1	0,1	5,2
6		0.1	0,4	0,4	0,4	0,3	0,2	0,1	0,1	2
Ընդամենը %	8	17,6	24,9	24,9	14,9	4,8	4,1	0,5	0,3	100

Արտադրողի անվանումը՝ "Քանաքեռի կարի ֆաբրիկա" ՍՊԸ:

Ծագման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

4. **Պաշտպանիչ վահանակներ ծնկների և արմունկների համար (լրակազմ):**

Ունեն անատոմիկ ձև՝ համապատասխանաբար ծնկի և արմունկի խորացումով, կազմված են արտաքին հիմնական կոշտ պլաստիկ նյութից շերտից, ներսից հարվածը փափկացնող ներքին սպունգե շերտից և ոտքերին ու արմունկներին ամրացման կարգավորվող 3-3,5սմ լայնության էլաստիկ ժապավեններից: Շերտերը ամրակցված են լատունե ամրակներով: Լրակազմը իր մեջ ներառում է պաշտպանիչ վահանակներ արմունկների և ծնկների համար՝ յուրաքանչյուրից մեկ զույգ: Գույնը՝ պաշտպանական: Փաթեթավորումը՝ հակերով, մեկ հակի մեջ 10-20 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1լրակազմ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումները: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը՝ 2%:

Արտադրողի անվանումը՝ Չինաստան:

Ծագման երկիրը՝ Չինաստան:

5. **<u>Ձեռնոց կաշվե առանց մատերի (զույգ)</u>** Արտադրվում է սև գույնի ձեռնոցի բնական կաշվից, հինգմատնյա է, մատերի ծայրամասը վերևից մատերի 2-րդ ծալվածքից կտրված: Ձեռնոցի երեսամասին թաթամասի մեջտեղում մշակված է 3,5-5 սմ բարձրություններով սեղանաձև 2-3 մմ հաստության խտացված սպունգով պաշտպանիչ շերտ՝ արտաքինից մշակված ձեռնոցի բնական կաշվից երեսացույով: Բոլոր մատների վրա երեսամասից երկարությամբ մշակված են 3,8-4,0 սմ երկարության օվալաձև 2-3 մմ հաստության խտացված սպունգով պաշտպանիչ շերտեր՝ արտաքինից մշակված ձեռնոցի բնական կաշվից երեսացույով: Բթամատի և ցուցամատի արանքում նույնպես մշակված է 3,8-4,0 սմ երկարության օվալաձև 2-3 մմ հաստության խտացված սպունգով պաշտպանիչ շերտ՝ արտաքինից մշակված ձեռնոցի բնական կաշվից երեսացույով: Բազկակալի մանժետը ներսից մշակված է էլաստիկ ժապավենով: Բազկակալը վերևից ձգվում է 2-2,5 սմ լայնության և 8-9 սմ երկարության երկշերտ կաշվե մանժետով, որը վերջնամասում ամրանում է 3-3,5 երկարությամբ և 1,8-2,0 սմ լայնությամբ կպչուն ժապավենով: Ափամասը բթամատի հետ միասին մշակված է լրացուցիչ կաշվե շերտով: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Շեղումները ըստ ԳՕՍՏ-ի:

Փաթեթավորումը՝ ստվարաթղթե տուփերով, մեկ տուփի մեջ՝ 30զ-գ: Տուփերը՝ պիտակավորված: Պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումները:

Արտադրողի անվանումը՝ Չինաստան:

Ծագման երկիրը՝ Չինաստան:

6. **<u>Բարձր ճտքերով կաշվե կոշիկներ՝ հատուկ նշանակության ստորաբաժանումների համար (զույգ):</u>** Կոշիկի երեսացուն բնական կաշվից՝ գույնը սև: Ճտքամասը կոմբինացված՝ խրոմե կաշի և հատուկ ջրակայուն մշակումով կոշկեղենի գործվածք 'Կոռդուռա 1500' կամ համարժեք: Կոշիկի տակացուն ձևավորված է հատուկ ջերմակայուն համածուլված ռետինից: Տակացուն ամրացվում է սոսինձով և ամրակարվում է: Ճտքերի բարձրությունը կրունկի վերին եզրից 21-22 սմ, կոշկաքուղերի օղակները D-աձև մետաղական (արագ կոճկելու համար): Լեզվակը բարձր՝ ամրակարված ամբողջ երկարությամբ:

Փաթեթավորումը՝ - եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղի մեջ 10-20 զույգ, տեսականին պետք է լինի ստվարաթղթե տուփի մեջ, մեկ տուփում՝ 1 զույգ, արկղերի վրա պետք է տպագրված լինի տեսականու անվանումը, քանակը, չափերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումները: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը՝ 2%:

Մատակարարը պարտավոր է երաշխավորել մատակարարված կոշիկի որակի համար, փաստացի կրման (շահագործման) ամբողջ ժամանակահատվածի ընթացքում՝ 24 ամիս, իսկ ժամկետից շուտ շարքից դուրս եկած քանակը անհատույց փոխարինել նորերով:

Չափսի սանդղակ

Չափս	38	39	40	41	42	43	44	45	46	47	48	Ընդամենը%
Ընդամենը%	1	3	7	25	28	23	8	3	1	0,5	0,5	100

Արտադրողի անվանումը՝ Չինաստան:

Ծագման երկիրը՝ Չինաստան:

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործերի կառավարչություն
Հ/Հ 900011140079
ՀՎՀՀ 00867454
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետ՝ գնդապետ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

"Քանաքեռի կարի ֆաբրիկա" ՍՊԸ
Ք. Երևան, Զ. Սարկավագի 157
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510023294810100
ՀՎՀՀ 00803554

տնօրեն

Ա. ԱՔՍՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-7/66-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Քանակը	Միավորի գինը, ՀՀ դրամ	Գումարը, ՀՀ դրամ	Ապրանքների մատակարարումը 2017թ. ըստ ամիսների
						Սեպտեմբեր
1	Արտադրական հատուկ հագուստ /Լեռնային գունաքողարկված համազգեստ/	լրակազմ	450	23 490	10 570 500	450
2	Արտադրական հատուկ հագուստ /Տափաստանային գունաքողարկված համազգեստ/	լրակազմ	450	23 490	10 570 500	450
3	Անջրանցիկ հագուստ /Կոստյում՝ քամուց և անձրևից պաշտպանող/	լրակազմ	1 800	15 492	27 885 600	1 800
4	Պաշտպանիչ բազկապաններ /Պաշտպանիչ վահանակներ ծնկների և արմունկների համար/	լրակազմ	1 800	22 890	41 202 000	1 800
5	Ձեռնոցներ /Ձեռնոց կաշվե առանց մատների/	զույգ	1 800	9 984	17 971 200	1 800
6	Ճտքավոր կոշիկներ /Բարձր ճտքերով կաշվե կոշիկներ, հատուկ նշանակության ստորաբաժանումների համար/	զույգ	450	18 900	8 505 000	450
	Ընդամենը	116 704 800 (մեկ հարյուր տասնվեց միլիոն յոթ հարյուր չորս հազար ութ հարյուր) ՀՀ դրամ				

Ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված վիճակում և պետք է մատակարարվեն ՀՀ ՊՆ կենտրոնական իրային բազա՝ քաղաք Երևան, մատակարար կազմակերպության տրանսպորտով:

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
/ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Հ. ՀԱՐՈՒՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

"Քանաքեռի կարի ֆաբրիկա" ՍՊԸ
Ք. Երևան, Զ. Սարկավագի 157
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510023294810100
ՀՎՀՀ 00803554

տնօրեն

Ա. ԱՇՈՏՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-7/66-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի ֆինանսավորման անվանատողի անվանումը	CPV-ի կոդը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ըստ ամիսների, ընդ որում՝			
			Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ.
1	Արտադրական հատուկ հագուստ /Լեռնային գունաքողարկված համազգեստ/	18111100/1/4/20	10 570 500	10 570 500	10 570 500	10 570 500
2	Արտադրական հատուկ հագուստ /Տափաստանային գունաքողարկված համազգեստ/	18111100/2/4/20	10 570 500	10 570 500	10 570 500	10 570 500
3	Անջրանցիկ հագուստ /Կոստյում՝ քամուց և անձրևից պաշտպանող/	18221100/1/4/20	27 885 600	27 885 600	27 885 600	27 885 600
4	Պաշտպանիչ բազկապաններ /Պաշտպանիչ վահանակներ ծնկների և արմունկների համար/	35111380/1/4/20	41 202 000	41 202 000	41 202 000	41 202 000
5	Ձեռնոցներ /Ձեռնոց կաշվե առանց մատերի/	18421130/1/4/21	17 971 200	17 971 200	17 971 200	17 971 200
6	Ճտքավոր կոշիկներ /Բարձր ճտքերով կաշվե կոշիկներ, հատուկ նշանակության ստորաբաժանումների համար/	18811210/2/4/21	8 505 000	8 505 000	8 505 000	8 505 000

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի անունից ՊԾԿ

Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

"Քանաքեռի կարի ֆաբրիկա" ՍՊԸ
Ք. Երևան, Զ. Սարկավագի 157
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510023294810100
ՀՎՀՀ 00803554

տնօրեն

Ա. ԱԶԱՏՅԱՆ

Հավելված N 4
N ԳՀԱՊՁԲ-7/66-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N __ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 4.1
N ԳՀԱՊՁԲ-7/66-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն